ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2011թ. դեկտեմբերի 16

թիվ 188 - Ա

ՍԵՐՅՈԺԱ ՉՈԼՈՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 111-րդ հոդվածի 1-ին մասով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի ա/ ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության /նշանակման/ կարգը հաստատելու մասին>> թիվ 319-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով <<Շենկանիի հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնի համար 2011 թվականի դեկտեմբերի 5-ին անցկացված մրցույթի արդյունքները և Ս. Չոլոյանի անձնական դիմումը՝ ***կարգադրում եմ.***

1. 2011 թվականի դեկտեմբերի 19-ից Սերյոժա Շալիկոյի Չոլոյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Շենկանիի հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնում նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր 5 տարի ժամկետով՝ լուծելով 2011 թվականի օգոստոսի 2-ին նրա հետ կնքված ժամկետային աշխատանքային պայմանագիրը:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ